ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅՐԵՆԻ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

Այս տարի նշվում է Ռուսաստանում արևելագիտական հիմնարկների ստեղծման 150-ամյակը։ Արևելագիտությունը «Արևելքի» ուսումնասիրությունը, իհարկե, շատ ավելի հին է, որովհետև Արևելքի երկրները եղել են մարդկային մշակույթի ամենահին օջախները, և առաջին գիրն ու գրականությունը պատկանում է նրանց։ Այդ առումով էլ մեր երկրում արևելագիտությունն ունի դարերի պատմություն։ Տվյալ դեպքում, ի նկատի է առնվում Պետերբուրգում «Ասիական թանգարան»-ի կազմակերպումը 1818 թ. նոյեմբերի 11-ին։ Սկզբնական շրջանում այն եղել է իրապես թանգարան՝ լուսավորչական որոշակի թեքումով։ Սակայն իր ավելի քան հարյուր տարվա գոյության ընթացքում նրա տպագիր ու ձեռագիր ֆոնդերը աճեցին և կազմեցին 250 հազար միավորից ավելի և ստացան համաշխարհային ճանաչում՝ որպես արևելագիտական կարևորագույն կենտրոնի։ Զարդացման նման ընթացքի վրա խոշոր ազդեցություն ունեցավ նրա ղեկավարների ընտրությունը, որոնց անունները մտել են համաշխարհային գիտության ոսկյա ֆոնդը։ Թանգարանի հիմնադիր և ղեկավար Խ. Ֆրենի կողքին պետք է հիշել Մ. Ի. Բրոսսեի, Բ. Ա. Դորնի, Վ. Դ. Ռոզենի, Վ. Վ. Ռադլովի, Պ. Ս. Սավելևի, Վ. Գ. Տիզենհաուզենի անունները։ Հետհոկտեմբերյան շրջանում, մինչև նրա վերակառուցման միջոցով արևելագիտության ինստիտուտի ստեղծումը (1930 թ.), թանգարանի բախտը կապված է եղել ակադեմիկոսներ Ա. Ֆ. Օլդենբուրգի, Վ. Վ. Բարտոլդի, Ի. Յու. Կրաչկովսկու, Ֆ. Ի. Ուսպենսկու, Բ. Յա. Վլադիմիրցևի, Հ. Ա. Օրբելու հետ։ Ասիական թանգարանը երկրի միակ արևելագիտական հիմնարկը չի եղել։ Այդ գիտությունը զարգացել է լազարյան ճեմարանում և ուսումնական այլ հիմնարկներում։ Նրա սկզբնական քայլերը կապված են արևելյան լեզուների ուսումնասիրության հետ։ Սակայն ներկայումս արևելագիտությունը դիտվում է որպես գիտությունների մի ամբողջություն, որի ուսումնասիրության առարկա են Արևելքի ժողովուրդների պատմությունը, տնտեսությունը, լեզուները, գրականությունը, արվեստը, նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանները։

Արևելք *հասկացությունը աշխարհագրական և պատմական իմաստով ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների։ Այն դեռևս հին եգիպտացիները և հրեաները օգտագործում էին, նկատի ունենալով իրենց արևելյան հարևաններին։ Հույներն այդ հասկացության տակ ըմբռնում էին հելլենական աշխարհից արևելք ընկած բոլոր երկրները, մասնավորապես Պարսկաստանը։ Հռոմեացիներն այն ավելի ընդարձակեցին, ընդգրկելով Իտալիայից արևելք եղած բոլոր երկրները, նաև Բյուզանդական կայսրությունը, երբ վերջինս IV դարի*

ավարտին անջատվեց Հռոմից։ Միջին դարերում եվրոպական ժողովուրդների համար արևելյան երկրներ էին համարվում Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի և թուրքական տիրապետության տակ գտնվող Բալկանների սլավոնական երկրները։ Քիչ ավելի ուշ, աշխարհագրական հասկացությունները ճշտվեցին և գործածության մեջ մտան Մերձավոր, Միջին ու Հեռավոր արևելք տերմինները։

Ինչպես իրավացի կերպով նշում է ակադեմիկոս Ն. Կոնրադը, անհրաժեշտ է պատմության օրինաչափությունները ուսումնասիրելիս ելնել «ամբողջ մարդկության պատմությունից և ոչ թե առանձին երկրների կամ ժողովուրդների։ Այնպիսի հասկացություններ, ինչպես՝ «Եվրոպա», «Ասիա», «Աֆրիկա» և այլն, աշխարհագրական, և ոչ պատմական հասկացություններ են։ Լավագույն դեպքում նրանք վերաբերում են պատմական աշխարհագրությանը։ Հիմնավորված չեն նաև այնպիսի հասկացությունները, ինչպես «Արևելք» և «Արևմուտք»։ Լավագույն դեպքում նրանք ցույց են տալիս առանձին ժողովուրդների խմբեր, որոնք, սակայն, ունեն փոփոխվող բովանդակություն զանազան ժողովուրդների մոտ»[1]։

Ավանդական արևելագիտության ուսումնասիրության առարկան էին, այսպիսով, գլխավորապես Ասիայի և Աֆրիկայի երկրներն ու ժողովուրդները, նրանց մշակույթն ու պատմությունը։

Արևելագիտությունը, որպես գիտության ճյուղ, առաջ է եկել XVI—XVII դարերում, կապիտալիստական հարաբերությունների օրրաններում՝ Հոլանդիայում, Անգլիայում և Ֆրանսիայում, որոնք դարձան նաև առաջին գաղութատեր պետությունները։ Որքան ավելի Արևելքի երկրները սկզբնական կապիտալիստական կուտակման աղբյուրից վերածեցին առևտրական և արդյունաբերական բուրժուազիայի հարստացման աղբյուրի, այնքան ավելի հետևողական դարձավ նրանց ուսումնասիրությունը, քանի որ այն անհրաժեշտ էր նրանց յուրացման և շահագործման համար։ Հետևապես, սկզբնական շրջանում արևելագիտությունը ուներ գլխավորապես գործնական նշանակություն, այն սահմանափակվում էր տվյալ երկրների ժողովուրդների աշխարհագրական, ազգագրական, ցեղային տվյալների և նրանց լեզուների ուսումնասիրություններով։ Այդպես էլ այն դասավանդվել է ուսումնական հաստատություններում (Փարիզ, Օքսֆորդ, Լայդեն և այլն) XVI դարից մինչև XX դարի սկզբները։

Հանգամանքների բերումով՝ առևտրականների, միսիոներների գրառումները, պատերազմների և այլ արշավների մասնակիցների աշխատությունները, ճամփորդական նոթերն ունեին զուտ նկարագրական բնույթ (օր. Ադամ Օլարիին Պարսկաստանի և Կովկասի մասին, 1647 և այլն)։ Մերձավոր ծանոթությունը, Արևելքի վերաբերյալ նյութերի կուտակումը հնարավոր են դարձնում հետզհետե ներկայացնել այդ երկրների սոցիալ-տնտեսական վիճակը. հասարակական փոխհարաբերությունները և նրանց յուրահատկությունները (Ֆ. Բերնիե, «Մեծ Մողոլի պետության վերջին քաղաքական հեղաշրջումների պատմությունը», 1670 և ուրիշներ)։

Զանազան հարստությունների հետ Արևմուտք բերված բնագրերի, ձեռագիր աղբյուրների կուտակման հետևանքով, Լայդենի, Լոնդոնի, Փարիզի, ավելի ուշ՝ Պետերբուրգի մատենադարաններում և հատուկ գրապահոցներում ստեղծ-

---

[1] Н. И. Конрад, Запад и Восток, М., 1966, стр. 473.

վում են հարուստ ֆոնդեր։ XVII—XIX դարերում դրանց ուսումնասիրության աշխատանքները խթանում են արևելյան բանասիրության, որպես բազմաճյուղ գիտության, զարգացումը։ Արևելագիտությունը հետզհետե դրվում է գիտական հիմքերի վրա։ 1771 թ. ֆրանսերեն է թարգմանվում Ավեստան։ Նույն դարի վերջին Եվրոպայում հատուկ ուսումնասիրության առարկա է դառնում սանսկրիտը։ Ընդլայնվում է մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը։ XIX դարում մեծ հաջողությունների է հասնում Հին Արևելքի պատմության ուսումնասիրությունը։ Վերծանվում են ասուրա-բաբելական, եգիպտական, հին պարսկական սեպագրերն ու արձանագրությունները, հրապարակվում հնագիտական պեղումների նյութերը։ Բազմաթիվ կենտրոններում կազմակերպվում են Արևելքի երկրների մշակույթը, կրոնը ուսումնասիրող ընկերություններ և գիտական հաստատություններ։

Նույն երևույթը տեղի է ունենում նաև Ռուսաստանում։ Ռուս վաճառական և ճանապարհորդ Աֆանասի Նիկիտինի (XVI դար) Հնդկաստան կատարած ուղևորության նկարագրությունից հետո հետաքրքրությունը դեպի Արևելքը աճում է։ Սակայն գործնական զգալի քայլեր կատարվում են միայն Պետրոս I-ի ժամանակաշրջանում։ 1705 թ. Պետերբուրգում բացվում է դպրոց, որտեղ սկսվում է ճապոներենի դասավանդումը։ Շուտով, լեզուներ սովորելու նպատակով, Պարսկաստան, Թուրքիա և Մոնղոլիա են ուղարկվում մի խումբ երիտասարդներ։ Դեպի Սիբիր կազմակերպված արշավները և նրա ուսումնասիրությունը, 1722—1723 թթ. Պարսկաստան կատարած ռուսական զորքերի արշավանքը, Չինաստանում մշտական դիվանագիտական ներկայացուցչության հիմնումը (1727 թ.) պայմաններ ստեղծեցին ավելի մոտիկից ծանոթանալու Արևելքի հետ։ Այնուհետև, արևելյան լեզուները հաստատուն տեղ գրավեցին նորաստեղծ գիտությունների ակադեմիայում։ Եղավ նաև «Ասիական ակադեմիա» կազմակերպելու առաջարկ, որը թեպետ չիրականացավ, բայց XVIII դարի երկրորդ կեսից, գործնական նկատառումներով, արևելյան լեզուների դասավանդումը մտցվեց Կազանի գիմնազիայում (թաթարերեն, արաբերեն, պարսկերեն, հայերեն, մոնղոլերեն, չինարեն, մանջուրերեն), Իրկուտսկի և Օմսկի, Տաշքենդի և Աստրախանի որոշ դպրոցներում։ Արաբերեն, պարսկերեն և թուրքերեն լեզուների ուսուցումը պարտադիր է դառնում Արտաքին գործերի կոլեգիայի և ապա Արտաքին գործերի մինիստրության ասիական գերատեսչության ուսումնական բաժանմունքում, որը գոյություն ունեցավ 84 տարի։

Ռուս-թուրքական հարաբերությունների սրումը և բախումներն անհրաժեշտ են դարձնում ռուս-թուրքերեն և թուրք-ռուսերեն բառարանների, թուրքերենի քերականության հրատարակումը։

Տնտեսական, քաղաքական, դիվանագիտական, մշակութային կապերի ուժեղացումը Արևելքի երկրների հետ XIX դարի սկզբին նոր խթան հանդիսացավ արևելագիտության զարգացման համար։

1805 թ. Խարկովի համալսարանում հիմնվում է երկրում առաջին, արևելյան լեզուների ամբիոնը։ Որոշ նոր լեզուների դասավանդում կազմակերպվում է Կազանի, Մոսկվայի, Դորպատի, Վիլնոյի, Պետերբուրգի համալսարաններում, ժամանակի որոշ տարբերությամբ և փոփոխակի հաջողություններով, որի պատճառը գլխավորապես մասնագետների պակասն էր, որոնց (Ժ. Դե-

մանԺ, Ֆ. Շարմուա և ուրիշներ) սկզբնական շրջանում հրավիրում էին արտասահմանից և հաճախ տեղափոխում մի համալսարանից մյուսը։ Այդ հանգամանքը չէր խանգարում արևելագիտության զարգացմանը երկրում։ Դրա առհավատչյան էին Լազարյան ճեմարանի բացումը Մոսկվայում (1815 թ.), Ռիշելիեի ուսումնարանի ստեղծումը Օդեսայում (1817 թ.), Ասիական թանգարանի հիմնադրումը Պետերբուրգում, արևելյան լեզուների դասավանդման ընդլայնումը բազմաթիվ դպրոցներում։ Գիտությունների ակադեմիայում (1810 թ.) թղթակից-անդամների և ակադեմիկոսների տեղեր են հատկացվում խոշոր արևելագետների համար։ Այսուհետև, ռուս արևելագիտությունը աչքի է ընկնում բազմակողմանի պատրաստված հետազոտողներով, որոնց շնորհիվ դարակեսից արևելագիտության մեջ սկսում են խորանալ և զարգանալ առանձին ուղղություններ։

Միջազգային ճանաչում է գտնում ռուսական չինագիտությունը, սկսած Ն. Բիչուրինի (1777—1853 թթ.) ժամանակից։ Հանձինս Վ. Վասիլևի, Ի. Զախարովի, Ա. Իվանովսկու և ուրիշների, արևելագիտության այդ ճյուղը հարստանում է բանասիրական և պատմական մի շարք ուսումնասիրություններով, մշակվում են չինական լեզվի բառարաններ կազմելու մեթոդներ։

Մոնղոլների պատմության, լեզվի, գրականության, բանահյուսության բնագավառում մեծ ծառայություններ են մատուցում Յա. Շմիդտը, Օ. Կովալևսկին, Ա. Բոբրովնիկովը, Ա. Պոզդնեևը, ավելի ուշ, սովետական շրջանում՝ ակադեմիկոս մոնղոլագետ Բ. Վլադիմիրցևը։

Ռուս գիտնականները միաժամանակ հայտնաբերեցին և գիտական շրջանառության մեջ մտցրին հսկայական քանակությամբ փաստաթղթեր, աղբյուրներ, նյութական և հոգևոր մշակույթի հուշարձաններ՝ ընդհանրապես Միջին Ասիայի, Սիբիրի, Մոնղոլիայի և Չինաստանի վերաբերյալ։ Հիշենք գեթ Պ. Սեմյոնով-Տյանշանսկուն, Գ. Պոտանինին, Գ. Գրում-Գրժիմայլոին, Ն. Պրժեվալսկուն, Պ. Կոզլովին։

Հնդկագիտությունը, սանսկրիտի և Հնդկաստանի ժամանակակից լեզուների ու գրականության ուսումնասիրությունը կապված է Պ. Պետրովի, Ի. Մինաևի, Ս. Օ. Օլդենբուրգի, Պ. Շչերբատսկու և ուրիշների անունների հետ։

Ռուսաստանի հին՝ պատմական, տնտեսական, քաղաքական, մշակութային կապերն իր մերձավոր հարևանների հետ թելադրում են ստեղծելու հատուկ պայմաններ արաբագիտության, իրանագիտության և թուրքագիտության զարգացման համար։ Առաջին հերթին և կոմպլեքսային ձևով դասավանդվում են Մերձավոր և Միջին արևելքի ժողովուրդների լեզուները։ Այնուհետև, գիտական հիմքերի վրա է դրվում առանձին պրոբլեմների ուսումնասիրությունը։

Արաբերենի և պարսկերենի առաջին քրեստոմատիաների, բառարանների և քերականության ձեռնարկների հեղինակն է Մոսկվայի համալսարանի դասախոս և ռեկտոր Ա. Բոլդիրևը։ Ակադեմիկոս Բ. Դորնը զգալի ծառայություններ է մատուցել աֆղանագիտությանը և պարսկագիտությանը։ Պարսից գրականության, բանահյուսության, լեզվի պատմության վերաբերյալ իրենց առաջնակարգ ուսումնասիրություններով հայտնի են Կ. Կոսսովիչը, Վ. Ժուկովսկին, Կ. Կալեմանը, Ֆ. Կորշը, Ա. Ռոմասկևիչը, Ն. Վեսելովսկին և շատ ուրիշներ։

Միջազգային առումով մեծ է ռուս արաբագետների ավանդը։ Դրանում իրենց պատկառելի բաժինն ունեն Օ. Սենկովսկին, Գ. Սաբլուկովը, Դ. Խվոլ-

սոնը, Վ. Գրիգասը, Վ. Տիզենհաուզենը, Մ. Նավրոցկին, Ն. Մեդնիկովը, Ա. Շմիդտը և մի շարք այլ բազմավաստակ հետազոտողներ։ Սովետական արաբագիտության երախտավոր Ի. Կրաչկովսկու կարծիքով, այդ գիտությունը XIX դարում տվել է երկու հսկաներ, դարի սկզբին՝ Ֆրեննին, վերջին՝ Վ. Ռոզենին։

Մեծաթիվ թուրքագետներից անհրաժեշտ է հիշել Ն. Բերյոզինի («Թուրքական գրականության պատմության»), Վ. Ռադլովի («Թուրքական ցեղերի ժողովրդական գրականության նմուշներ», 7 հատ.), Ա. Քյազիմբեկի (Բաբը և բաբիները, Մյուրիդիզմը և Շամիլը, Իսլամի պատմությունը, ադրբեջաներեն լեզվի քերականություն), Վ. Սմիրնովի անունները։ Վերջինս ուսումնասիրել է մոնղոլների ազդեցության պրոբլեմը Ռուսաստանի վրա, գրել է «Քուչիբեյ Գոմյուրջինսկին և XVII դարի մյուս օսմանյան գրողները Թուրքիայի անկման պատճառների մասին» և այլ գործեր։ Միջին Ասիայի պատմության, աշխարհագրության, մշակույթի ուսումնասիրությամբ երկար տարիներ զբաղվել և մեծարժեք աշխատություններ են թողել Վ. Վելյամինով-Զերնովը, Ն. Խանիկովը, Վ. Գրիգորևը, Վ. Բարտոլդը, Ն. Քաթանովը, Լ. Բուդաղովը և ուրիշներ։

Հին Արևելքի պատմությունը ամփոփված է համաշխարհային ճանաչում գտած՝ Բ. Տուրաևի, Վ. Ստրուվեի և այլոց գործերում։ Արևելագիտության զարգացմանը Ռուսաստանում, բացի դիտական և ուսումնական հաստատություններից, նպաստել են աշխարհագրական, հնագիտական, ինչպես նաև բնագիտական և մարդաբանական ընկերությունները, Միջին և Արևելյան Ասիայի ուսումնասիրության ռուսական կոմիտեն, Մոսկվայի և Պետերբուրգի հանրային գրադարանները, Գլխավոր շտաբի արևելյան բաժինը, Արևելագիտական և ռուս օրիենտալիստների ընկերությունները և բազմաթիվ պարբերական և այլ հրատարակություններ (տեղեկագրեր, տեղեկատուներ, բյուլետեններ, ժողովածուներ, ամսագրեր), որոնք լույս էին տեսնում սկսած XVIII դարի սկզբից մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը։

Արևելագիտության հատուկ ճյուղերից են կովկասագիտությունը և հայագիտությունը, որոնց զարգացման գործում մեծ գեր են խաղացել Լազարյան ճեմարանը, Մոսկվայի և Պետերբուրգի գիտական և ուսումնական հիմնարկներն ու նրանց աշխատակիցները (ակադ. Ս. Բրոսսե, Մ. Էմին, Ա. Խուդաբաշյան, Ն. Մառ, Ա. Ցագարելի, Ք. Պատկանյան, Լ. Մսերյանց, Լ. Լոպատինսկի և այլն)։

Որպես հայ մտքի գիտական հատուկ ուղղություն, ստեղծվել և զարգացել է հայ արևելագիտությունը։ Այն տարբերվում է եվրոպական և ռուսական արևելագիտությունից նրանով, որ եթե առաջինների համար Արևելքը ներկայանում էր որպես գրավման և շահագործման առարկա, կամ առնչվում էր հարևանների հետ գործնական կապեր ունենալու անհրաժեշտությանը, ապա հայ արևելագիտության համար ուսումնասիրության առարկա երկրներն իրականում եղել են իր ժողովրդի հայրենիքը, նրա ապրած բնաշխարհը, կամ էլ մերձավորագույն հարևանների, համարյա նույն բնա-պատմական և սոցիալ-տնտեսական միջավայրը։ Այս իմաստով էլ հայկական բնագրերն ունեն առաջնակարգ սկզբնաղբյուրի նշանակություն։

Հայ ժողովրդի պատմական բախտի հետ կապված է եղել նրա նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանների առկայությունը և պահպանությունը։

Արտագաղթի հետ բնօրրանից դուրս է բերվել գրավոր հուշարձանների մեծ մասը և կենտրոնացվել Երևանի, Լենինգրադի, Թբիլիսիի, Փարիզի, Լոնդոնի, Վիեննայի, Վենետիկի, Երուսաղեմի, Նոր Ջուղայի և այլ քաղաքների գրապահոցներում, արխիվներում և մասնավոր հավաքածուներում։ Նրանց մի մասը լուսաբանելով հայ ժողովրդի պատմությունը, անդրադառնում է նաև Արևելքի հարևան ժողովուրդների անցյալի առանձին դրվագներին։ Մյուս մասը, ուղղակի ընդհանուր բնույթի արևելագիտական աղբյուրներ են և վերաբերում են ամբողջ Արևելքին։ Դրանցից են հայ հին միջնադարյան մշակույթի ականավոր ներկայացուցիչներ Ստեփաննոս Տարոնցի-Ասողիկի «Համընդհանուր պատմությունը» (XI դ.) և Վարդան Արևելցու (XIII դ.) «Տիեզերական պատմությունը» (XIII դ.), Գրիգոր Դարանաղցի-Կամախեցու «Ժամանակագրությունը», Զաքարիա Սարկավագի «Պատմագրությունը» (XVII դ.), Ղուկաս Ինճիճյանի և Ստ. Ադոնցի «Աշխարհագրություն չորից մասանց աշխարհի» (XIX դ.) բազմահատորյակը և այլն։ Հայ հեղինակների որոշ աշխատություններ էլ պարունակում են մանրամասն պատմական, բանաստեղծական, տնտեսական, ազգագրական և այլ տեղեկություններ՝ Հնդկաստանի (Հ. Սիմոնյան «Հայդար Ալիի կենսագրությունը», Թովմաս Խոջամալյան «Հնդկաստանի պատմությունը»), կամ այլ երկրների վերաբերյալ։ Այսպես, Իրանի և Օսմանյան կայսրության պատմության համար չափազանց կարևոր են այնպիսի գործեր, ինչպիսիք են Մովսես Կաղանկատվացու՝ «Պատմութիւն աղվանից աշխարհի», Ղևոնդ Պատմիչի՝ «Պատմութիւն»-ը, Գրիգոր Ակնեցու՝ «Պատմութիւն ազգին Նետողաց», Թովմա Մեծոփեցու՝ «Պատմութիւն Լանկ-Թեմուրայ և յաջորդաց իւրոց», Զաքարիա Ագուլեցու՝ «Օրագրությունը», ինչպես նաև Սիմեոն Ապարանցու, Խաչատուր Ջուղայեցու, Աբրահամ Կրետացու, Առաքել Դավրիժեցու, Սիմեոն Լեհացու, Քյոմուրճյան Երեմիա Չելեբիի և ուրիշների գործերը։ Հայ հեղինակների մի շարք աշխատություններ լուսաբանում են Աֆրիկայի արաբական երկրների կամ հեռավոր Արևելքի ժողովուրդների պատմությունը։

Բազմակենտրոն է հայ արևելագիտությունը։ Պատմական հանգամանքների բերումով XIX դարում հայ մշակույթի և գիտության օջախներն են դառնում Մոսկվան և Պետերբուրգը, Էջմիածինն ու Թիֆլիսը, Կոստանդնուպոլիսն ու Կալկաթան, Վիեննան ու Վենետիկը, Կահիրեն ու Մադրասը, ինչպես նաև Եվրոպայի և Ասիայի շատ կենտրոններ։ Մոսկվայի Լազարյան ճեմարանում իրենց գործունեությունն են ծավալում հայ մշակույթի ներկայացուցիչներ Ս. Նազարյանը, Մ. Էմինը, Գ. Քանանյանը, Կ. Կոստանյանը, Գ. Խալաթյանցը, Լ. Մսերյանցը։ Հայկական ուսումնական հիմնարկը, ակադեմիկոս Հովսեփ Օրբելու արտահայտությամբ, դառնում է «ռուսական արևելագիտության խոշորագույն ուսումնական ու գիտական կենտրոններից մեկը»։ Այստեղ են ստանում իրենց կրթությունը և ծավալում գործունեություն խոշոր ռուս արևելագետներ Ն. Աշմարինը, Խ. Բարանովը, Վ. Գորդլևսկին, Ն. Դմիտրիևը, Ա. Կրիմսկին, Բ. Միլլերը, Վ. Մինորսկին, Ա. Սեմյոնովը և ուրիշներ։

XIX դարի սկզբի լավագույն արևելագետ՝ արաբերենի, պարսկերենի, թուրքերենի քաջատեղյակ, այդ լեզուների բառարանների և մի շարք աշխատությունների հեղինակ է Գևորգ Դպիրը։ Հարուստ արևելագիտական նյութեր են պարունակում Ղ. Ալիշանի «Այրարատ», «Սիսուան», «Սիսական», «Շիրակ»

կապիտալ գործերն ու այլ աշխատությունները։ Գ. Այվազովսկին, Գ. Սրվանձտյանը, Ա. Դագյանը, Պ. Սաթանյանը և ուրիշներ, իրենց ստեղծագործություններում լուսաբանում են Օսմանյան կայսրության պատմությունը, նրա ներքին վիճակը և արտաքին քաղաքականությունը։ Իրանի պատմությանն ու մշակույթին են նվիրված՝ Մ. Թաղիադյանի, Ա. Տեր-Հովհաննիսյանի, Կ. Եգյանի, Լ. Տիգրանովի, Հ. Առաքելյանի աշխատությունները։ Հին ու նոր Արևելքը իր պատշաճ տեղն է գրավել Ն. Ագոնցի, Լեոյի, Ա. Ալպոյաճյանի, Ա. Սուրմելյանի. Գ. Մսերյանի և հայ ուրիշ պատմաբանների գործերում։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը բախտորոշ նշանակություն ունեցավ նաև արևելագիտության հետագա զարգացման համար։ Նրա մեթոդաբանական հիմքը և ելակետը դարձան Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի դաղափարները Արևելքի և Արևմուտքի երկրների զարգացման ընդհանուր օրինաչափությունների մասին, նրանց ուսմունքը՝ ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ։ Բուրժուական արևելագիտությունը, որը զգալի ծառայություններ էր մատուցել իմպերիալիստական շրջանների գաղութային քաղաքականությանը, փոխարինվեց սկզբունքորեն նոր, սովետական, մարքսիստական արևելագիտությամբ, որի նպատակն է գիտականորեն ապացուցել գաղութային սիստեմի ոչնչացման անխուսափելիությունը և պատմական անհրաժեշտությունը, օգնել Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների, դեմոկրատական հեղափոխությունների հաղթանակին, նրանց ազատության և անկախության ամրապնդմանը։

Սովետական կառավարության, անձամբ Վ. Ի. Լենինի աջակցությամբ ստեղծվում են արևելագիտական ուսումնական և գիտական հիմնարկներ։ Լաղարյան ճեմարանի վերակառուցմամբ՝ 1920 թ. կազմակերպվում է կենդանի արևելյան լեզուների կենտրոնական ինստիտուտ, իսկ 1921 թ.՝ Մոսկվայի արևելագիտական ինստիտուտը։ 1922 թ. հիմնադրվում է արևելագիտական համառուսաստանյան գիտական ասոցիացիա, որը հրատարակում է «Նովի վոստոկ» և «Ռևոլյուցիոնի վոստոկ» ամսագրերը։ 1930 թ. բացվում է գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը, որը և դառնում է ռուս արևելագիտության լավագույն տրադիցիաների շարունակող, հաղթահարում ռուսական ակադեմիական արևելագիտության և ժամանակակից Արևելքի իրականության միջև եղած ճեղքվածքը։

Աղդիական պրոբլեմները դառնում են արևելագիտական ուսումնասիրությունների կարևորագույն մասը, հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, երբ ամուր կապեր հաստատվեցին ՍՍՀՄ և Արևելքի երկրների միջև։

Սովետական կառավարության անունից ողջունելով արևելագետների 25-րդ կոնգրեսի պատգամավորներին, Ա. Միկոյանը նշեց, որ «Արևելագիտությունը միայն այն դեպքում կարող է լայն ճանաչում գտնել, երբ նա կծառայի Արևելքի ժողովուրդների շահերին»։ Այս նշանաբանի տակ էլ զարգացել է սովետական արևելագիտությունը։

Լեզվաբանությունն ընդլայնեց իր հետաքրքրությունների բնագավառը պատմական, աշխարհագրական և պրակտիկ իմաստով։ Հատուկ ուշադրության արժանացան առանձին լեզուների կազմավորման պրոցեսը և նոր այբուբեն ստեղծելու խնդիրը այն ժողովուրդների համար, որոնք դեռ չունեին դիր ու դրա-

կանություն։ 1930 թ. որոշ բուհերում սկսեցին դասավանդվել աֆրիկական լեզուներ, իսկ 1945 թ. Լենինգրադի համալսարանում կազմակերպվեց այդ լեզուների ամբիոն Դ. Օլդեռոգգեի ղեկավարությամբ, որն արդեն հրատարակել է որոշ լեզուների բառարաններ և քերականության ձեռնարկներ։ Արևելյան լեզուների ուսումնասիրությանը նվիրված աշխատություններով հռչակ են ձեռք բերում Խ. Բարանովը, Բ. Պաշկովը, Ե. Սևորդյանը, Գ. Ծերեթելին, Ա. Կոնոնովը, Ի. Օշանինը, Գ. Սանժեևը, Վ. Աբաևը և ուրիշներ։

Արևելքի դրականության ականավոր մասնագետները (Ի. Բրագինսկի, Ե. Զելիշև, Ա. Միրզոև, Ի. Ֆելշտինսկի, Լ. Ալկաևա, Լ. Էյդլին) մեծ ջանասիրությամբ աշխատում են լուսաբանել զարգացող ժողովուրդների անցյալի հարցերը, հետևում են ժամանակակից գրականության խնդիրներին, արձագանքում բոլոր նոր, առաջադիմական երևույթներին՝ քննադատության ենթարկելով հետադիմական ուղղությունները։

Զգալի հաջողությունների հասան Արևելքի հին և նոր պատմության, պատմագիտության ուղղությունները։

Այս բնագավառում իր ծառայություններն ունի (չնայած որոշակի սխալներին) Մ. Պավլովիչը (Վոլոնտեր), որպես արևելագետների առաջին ասոցիացիայի նախագահ և բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ։ Մերձավոր և Միջին արևելքի իրադարձությունների մասին կարևոր աշխատությունների հեղինակ են Վ. Վորովսկին (1871—1923 թթ.) և Ֆ. Ռոտշտեյնը։ Այս մարքսիստ պատմաբանների կողքին կարելի է հիշատակել այնպիսի գիտնականների, որոնք լուրջ ավանդ են մուծել նախահոկտեմբերյան շրջանի արևելագիտության մեջ և իրենց կապիտալ գործերով ավելի շատ բան տվել սովետական գիտությանը։ Դրանք են՝ ակադեմիկոսներ Վ. Բարտոլդը (Իրան, Աֆղանստան, Միջին Ասիա), գրականագետ Ա. Կրիմսկին, Վ. Գորդլևսկին (Պարսկաստան, Թուրքիա), Ի. Կրաչկովսկին (արաբական երկրներ), Ա. Բարաննիկովը, Ս. Օլդենբուրգը, Ֆ. Շչերբատսկին (Հնդկաստան), Վ. Ալեքսեևը (Չինաստան), Ն. Կոնրադը (Ճապոնիա), Ա. Գուբերը (Հարավ-Արևելյան Ասիայի երկրներ)։ Նույնը կարելի է ասել ակադ. Բ. Տուրաևի և Վ. Ստրուվեի մասին, որոնց արժանավոր հետնորդներն են, հին Արևելքի ուսումնասիրության գծով՝ Բ. Պիոտրովսկին, Մ. Մասսոնը, Ս. Կիսելևը, Ա. Օկլադնիկովը, Մ. Տոլստովը, Գ. Մելիքիշվիլին, Ս. Ռուդենկոն, Յու. Պերեպելկինը, Ի. Դյակոնովը, Մ. Կորոստովցևը, Ա. Ալի-Զադեն և սովետական շատ ուրիշ գիտնականներ։

Արևելքում ֆեոդալիզմի ձևավորման և զարգացման պրոբլեմի ուսումնասիրման բնագավառում լուրջ ավանդ մտցրեցին Ն. Պիգուլևսկայայի, Ա. Յակուբովսկու, Ի. Պետրուշևսկու, Ի. Ռեյսների, ՍՍՀՄ ԳԱ Աֆրիկայի ինստիտուտի հիմնադիր Ի. Պոտեխինի և շատ երիտասարդ մասնագետների ուսումնասիրություններն ու կոլեկտիվ աշխատությունները։

Նոր և նորագույն պատմության շրջանը, ազգային-ազատագրման պրոցեսի արդի ժամանակաշրջանի խնդիրներն իրենց խորը լուսաբանումն են գտել Ե. Ժուկովի, Բ. Գաֆուրովի, Ռ. Ուլյանովսկու, Վ. Լուցկու, Ե. Բելյաևի, Ա. Դյակովի, Ա. Շպիրտի, Ս. Տիխվինսկու, Ա. Միլլերի, Ե. Լուդշուվեյտի և այլոց գործերում։ Հիշյալ գիտնականների գործունեությունը կապված է գլխավորապես գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտի հետ, որի 27 բաժիններում ու սեկտորներում և նրա լենինգրադյան բաժանմունքի կաբինետներում աշխատում են մի քանի հարյուր աշխատակիցներ։ Սրանց ընդհա-

նուր ճանաչում գտած աշխատությունները, որոնց թիվը վերջին 10 տարում անցնում է 1100-ից, թարգմանվում են նաև եվրոպական և արևելյան լեզուներով և ընդգրկում են Արևելքի երկրների ժամանակակից պրոբլեմները։

Սովետական արևելագիտության բնորոշ կողմերից է՝ տրադիցիոն կենտրոնների կողքին նորերի կազմակերպումը։ Այսպես, Արևելքի երկրների խնդիրներով, բացի արևելագիտության (Ասիայի ժողովուրդների) ինստիտուտից, զբաղվում են՝ Աֆրիկայի, Լատինական Ամերիկայի, համաշխարհային էկոնոմիկայի և միջազգային հարաբերությունների, ազգագրության, հնագիտության և գիտությունների ակադեմիայի այլ ինստիտուտներ ու Ռուսաստանյան Ֆեդերացիայի բազմաթիվ ֆիլիալներ, Ուկրաինայի երկու համալսարաններ, ինչպես նաև գիտա-հետազոտական հատուկ հիմնարկներ ու բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ Ուզբեկստանում, Տաջիկստանում, Ղազախստանում, Կիրգիզիայում, Թուրքմենստանում, Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում։

Սովետական Հայաստանի առաջին ուսումնական և գիտական հիմնարկը եղել է Երևանի համալսարանը, որտեղ 1923 թ. սկսած՝ դասավանդվել են արևելագիտական առարկաներ, 1940 թ. հիմնվել է արևելյան լեզուների և գրականության ամբիոնը, բացվել է բանասիրական ֆակուլտետի համապատասխան բաժին, որի հիման վրա և ստեղծվել է (1968 թ.) արևելագիտության ֆակուլտետը։

Համալսարանում են կատարել իրենց հայագիտական և արևելագիտական աշխատանքները բազմավաստակ գիտնականներ Հ. Աճառյանը, Հ. Մանանդյանը, Գ. Ղափանցյանը, Լեոն և նրանց աշակերտները։ 1930—1940 թթ. հայ ժողովրդի և նրա հարևանների հին ու նոր պատմության և մշակույթի ուսումնասիրության բնագավառում աշխատանքներ տարվել են ԳԱ հայկական ֆիլիալում։ Այնուհետև, գիտությունների ակադեմիայի ստեղծումից հետո, գիտա-հետազոտական աշխատանքը կենտրոնանում է այստեղ։ Ակադեմիայի առաջին պրեզիդենտ, խոշորագույն սովետական արևելագետ, կովկասագետ և հայագետ Հ. Օրբելին (1887—1961 թթ.) մեծ երախտիք ունի հայ արևելագիտական մտքի զարգացման բնագավառում։

Շուտով պատմության ինստիտուտի կազմում ձևավորվում է Մերձավոր և Միջին արևելքի պատմության և տնտեսության խումբը, որի բազայի վրա, 1958 թ. կազմակերպվում է արևելագիտության սեկտորը։ Գոյության 10 տարիների ընթացքում սեկտորը հրատարակել է ավելի քան 40 անուն գիրք՝ արաբական երկրների, Իրանի և Թուրքիայի նոր և նորագույն պատմության, տնտեսության ու մշակույթի վերաբերյալ։ Բացի արաբագիտությունից, իրանագիտությունից և թուրքագիտությունից, սեկտորը զբաղվում է նաև քրդագիտությամբ։

Հայաստանի քրդագետները շարունակելով ռուս (Ա. Ժաբա, Պ. Լերխ, Վ. Մինորսկի, Վ. Նիկիտին, Պ. Ավերյանով և այլն) և հայ (Խ. Աբովյան, Գ. Սրվանձտյան, Մ. Եղիազարյան, Ս. Հայկունի, Լազո-Հակոբ Ղազարյան) քրդագիտության լավագույն տրադիցիաները, հաջողությամբ մշակում են քուրդ ժողովրդի պատմության, լեզվի, գրականության կարևորագույն պրոբլեմները։

Ուսումնասիրվող խնդիրները արտացոլվել են սեկտորի ժողովածուներում («Արևելագիտական ժողովածու» 1-ին և 2-րդ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրները և ժողովուրդները» թեմատիկ ժողովածուների հրատարակվող շար-

քը), արաբական ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին, նավթի պրոբլեմին և օտար կապիտալի ներխուժմանը, Իրանի ագրարային հարաբերություններին. հասարակական հոսանքներին ու ազգային հարցին, Թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությանը, Արևելքի հայ գաղութների պատմությանը, մեր ժողովրդի և հարևանների կուլտուրական կապերին, լեզվական-գրական տոնչություններին և այլ պրոբլեմներին վերաբերող ուսումնասիրություններում։ Հրատարակվել են թուրքական և արաբական աղբյուրները հայերի և Հայաստանի մասին (5 հատոր, տպագրության են պատրաստել Ա. Սաֆրաստյանը և Հ. Նալբանդյանը). Շարունակվում է աշխատանքը միջնադարյան և Հին Արևելքի ուսումնասիրության բնագավառում։ Այս գործում կարևոր ավանդ են մուծում պատմության, հնագիտության և ազգագրության, արվեստի պատմության, լեզվի, գրականության, փիլիսոփայության ակադեմիական ինստիտուտները, Մատենադարանը, համալսարանը, հայկական մանկավարժական ինստիտուտը։

Արևելագիտության սեկտորը համագործակցում է ինչպես Սովետական Միության, այնպես էլ արտասահմանյան մի շարք գիտական հիմնարկների և արևելագետների հետ։

1960 թ. արևելագետների համաշխարհային 25-րդ կոնգրեսի աշխատանքներն ավարտվելուց անմիջապես հետո, Երևան ժամանեցին այնպիսի աշխարհահռչակ գիտնական-արևելագետներ, ինչպիսիք են՝ պրոֆեսորներ Ֆ. Մինորսկին (Անգլիա), Վ. Բրնիցիանուն (Ռումինիա) և ուրիշներ։

Հետագա տարիներին սեկտորի աշխատանքների հետ ծանոթացան ու գիտական զեկուցումներով հանդես եկան արտասահմանյան մի շարք ականավոր արևելագետներ՝ դոկտոր Դ. Մաքքենզին, պրոֆեսոր Դոուսեթը, Պիրսոնը, Լանգը (Անգլիա), Ֆրայը, Սանջյանը (ԱՄՆ), Ֆարուքյանը, Ֆրուզանֆարը, Նքթայը (Իրան), Էմիլ Թուման, Ք. Ջումբլաթը, Ժորժ Հանան (Լիբանան), Ռաշիդ Քուրդը, Նիզար Խալիլը (Սիրիա), Աբդուլ-Համիդ Ալ-Ալվաջին (Իրաք), Ուպադհայան (Հնդկաստան), Ա. Կիժիկավովան (Չեխոսլովակիա), Լ. Խիրշովիչը (Լեհաստան)։ Գիտական կապերի ընդլայնումը մեծապես նպաստում է գրքափոխանակությանը և սեկտորի մասնագիտական գրադարանի հարստացմանը, որը ներկայումս ունի մի քանի հազար կտոր գրականություն, այդ թվում նաև օտար լեզուներով մոտ 2000 այնպիսի գրքեր, որոնք հազվագյուտ են Սովետական Միությունում։

Այս առումով իրենց հայրենանվեր գործերով դրվատանքի են արժանի Վարուժան Սալաթյանը, Ռոբեր Ջեբեջյանը, Երվանդ Հյուսիսյանը, Հովհաննես Թորիկյանը և ուրիշներ։ Վերջիններիս և այլոց օգնությամբ շարունակում է ստացվել օտար լեզուներով գրականություն, մամուլ, անհատական գրադարաններ։

Այսպիսով ստեղծվում է անհրաժեշտ արևելագիտական բազա, որը հնարավորություն կտա ընդլայնելու ակադեմիայի և հանրապետության արևելագետների գիտա-հետազոտական աշխատանքները։

Սովետական արևելագետների համատեղ աշխատանքի արդյունքն է հանդիսանում լույս տեսած կոլեկտիվ աշխատությունների մի ամբողջ մատենաշար՝ գաղութատիրության, Արևելքում իմպերիալիզմի քաղաքականության դեմ, ՍՍՀՄ-ի, սոցիալիստական երկրների և զարգացող երկրների համագործակ-

ցության մասին։ 1957 թ. սկսել է իր աշխատանքը հատուկ արևելագիտական հրատարակչությունը, որը տարեկան լույս է ընծայում ավելի քան 400 անուն գիրք։

Արևելագիտության զարգացմանը նպաստեցին մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկերի և թեմատիկ ժողովածուների, հանրագիտարանների, ՍՍՀՄ արտաքին քաղաքականության փաստաթղթերի հրատարակությունները։ Կարևոր նշանակություն ունի «Համաշխարհային պատմության», Ասիայի և Աֆրիկայի, ինչպես նաև առանձին երկրների պատմության տարբեր շրջանների վերաբերյալ աշխատությունների և թարգմանական գրականության լույս ընծայումը, արևելագիտական պարբերականների՝ «Նարոդի Աղիի ի Աֆրիկի» և «Աղիյա ի Աֆրիկա սեգոդնյա» հրատարակումը։

Հատկանշական է այն հանգամանքը, որ մարքսիստական արևելագիտությունը զարգանում է ոչ միայն մեր երկրում, ԳԴՀ-ում, Լեհաստանում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում ու Ռումինիայում, այլև Արևմուտքի շատ երկրներում, որոնք այլևս մենաշնորհ չունեն գիտության այս ասպարեզում։ Բավական է հիշատակել, որ արևելագիտությամբ այս կամ այն չափով զբաղվող մոտ 80 երկրների կեսը, Արևելքի երկրներն են։ Այդ գիտության համաշխարհային բնույթի մասին է խոսում այն փաստը, որ արևելագետների միջազգային կոնգրեսները տեղի են ունենում պարբերաբար, 3 տարին մեկ անգամ։ Ցայժմ գումարված 27 կոնգրեսից մեկը (մինչև 2-րդ համաշխարհային պատերազմը) տեղի է ունեցել Արևելքի երկրներում և մեկն էլ Ռուսաստանում (3-րդը—1878 թ.)։ Վերջին 20 տարիների ընթացքում տեղի ունեցած կոնգրեսներից երկուսը գումարվել է Ասիայում (22-րդը—Ստամբուլում, 1951 թ. և 26-րդը Դելիում՝ 1964 թ.), մեկը՝ Մոսկվայում (25-րդը—1960 թ.), մեկն էլ ԱՄՆ-ում (27-րդը—1967 թ.)։

Մարդկության բախտորոշ գործերում Արևելքի դերի և նշանակության բարձրացմանը համընթաց բուռն զարգացում է ապրում համաշխարհային արևելագիտությունը։ Այդ պրոցեսին զուգընթաց ուժեղանում է պայքարը մարքսիստական և բուրժուական արևելագիտության միջև։ Ահա թե ինչու, հիշյալ բնագավառը ևս դարձել է երկու սիստեմների պայքարի կարևոր գաղափարախոսական զենքերից մեկը։ Անկասկած է, որ մեկուկես դարի կայուն տրադիցիաներ ունեցող սովետական արևելագիտությունը այսուհետև էլ կկատարի իր առաջատար դերը՝ հանուն Արևելքի ժողովուրդների վերջնական ազատագրման։

ИЗ ИСТОРИИ РАЗВИТИЯ ОТЕЧЕСТВЕННОГО ВОСТОКОВЕДЕНИЯ

О. Г. ИНДЖИКЯН

Резюме

В статье, в связи с 150-летием востоковедческих учреждений страны, излагается краткая история развития востоковедения в Европе и России. Указывается роль Азиатского музея, государственных университетов Москвы, Ленинграда и ряда других городов, а также Лазаревского и других институтов в развитии русского востоковедения.

Специальный раздел посвящен советскому востоковедению, начиная с его первых шагов до современного состояния.

В статье особое внимание уделено развитию армянской востоковедной мысли. Упомянуты как средневековые авторы, их произведения и источники, так и исследования нового и новейшего времени, включая труды Сектора востоковедения, других научных учреждений и вузов республики, а также зарубежных армянских авторов.

Марксистское востоковедение представлено как орудие теоретической борьбы против идеологии и политики колониализма и империализма.